ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 3-Ի ԹԻՎ 1543-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 1543-Ն որոշման հավելվածի 185-րդ կետից հետո լրացնել նոր 185.1-185.4-րդ կետեր հետևյալ բովանդակությամբ.

«185.1 Համապատասխան տեխնիկական միջոցների առկայության դեպքում կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի օտարերկրյա կալանավորված անձանց և դատապարտյալներին ամսվա ընթացքում մեկ անգամ մինչև քսան րոպե տևողությամբ կարող է տրամադրվել տեսազանգի (skype) հնարավորություն: Տեսազանգի ընթացքում կարող է ներկա գտնվել քրեակատարողական հիմնարկի վարչակազմի ներկայացուցչիչը:

185.2 Օտարերկրյա քաղաքացի կալանավորված անձանց և դատապարտյալներին տեսազանգից օգտվելու հնարավորություն տրամադրվում է ուղղիչ հիմնարկի պետի սահմանած ժամանակացույցով:

185.3 Տեսազանգից օգտվելու գործընթացը հաշվառվում է համապատասխան մատյանում, որտեղ նշում են օտարերկրյա քաղաքացի կալանավորված անձանց և

դատապարտյալների անվանական տվյալները, տեսազանգից օգտվելու հաճախականությունը և տևողությունը:

185.4 Օտարերկրյա քաղաքացի կալանավորված անձինք և դատապարտյալները տեսազանգից օգտվելու համար դիմում են ուղղիչ հիմնարկի վարչակազմին, որն այն տրամադրում է նախօրոք սահմանված հերթականությամբ:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 3-Ի ԹԻՎ 1543-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 1543-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ փոփոխություն կատարելու անհրաժեշտությունը պայմանավորված է քրեակատարողական ծառայության գործունեության ընթացքում ի հայտ եկած մի շարք խնդիրների կանոնակարգման անհրաժեշտությամբ:

ՀՀ օրենսդրությամբ սահմանվում են մի շարք իրավունքներ և հնարավորություններ կալանավորված անձնաց և դատապարտյալների կապն ընտանիքի և արտաքին աշխարհի հետ պահպանելու համար՝ նրանց իրավունք վերապահելով ունենալու տեսակցություններ, հեռախոսազանգեր, վարելու նամակագրության և այլն:

Միաժամանակ, ստացվում է, որ նման կարգավորման պարագայում խնդիր է առաջանում այն կալանավորաված անձանց և դատապարտյալների պարագայում, ովքեր հաճախ չեն կարողականում օգտվել տեսակցություններից և հեռախոսազանգերից՝ մտերիմների արտերկրում գտնվելու և արտերկրի հետ հեռախոսակապի թանկ սակագների պատճառով:

Դատապարտյալի ուղղման և վերաինտեգրման համար անհրաժեշտ պայմաններ են հանդիսանում ընտանիքի և արտաքին աշխարհի հետ կապի պահպանումը: Ընտանիքի և արտաքին աշխարհի հետ կապի պահպանումը նպաստում է նաև անազատության մեջ

գտնվող անձանց օրինապահ վարքագծի խթանմանը և նրանց մոտ առողջ կենսակերպի ամրապնդմանը:

Նախագծով առաջարկվող կարգավորումների նման կարգավորում է նախատեսում նաև Լեհաստանի քրեակատարողական օրենսգրքի 105-րդ հոդվածը՝ նախատեսելով կապի այլ միջոցներից (բացառությամբ տեսկցությունների, նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային ծանրոցների և դրամական փոխանցումների) օգտվելու հնարավորություն:

Նախագծի կարգավորման առարկայի շրջանակներում առաջարկվում է որոշման 185-րդ կետում կատարել համապատասխան լրացումներ, որի արդյունքում կալանավորված անձանց և դատապարտյալներին հնարավորություն կտրվի արտաքին աշխարհի հետ կապի ապահովման համար օգտվել նաև կապի այլ միջոցներից:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծով առաջարկվում է Հայաստանի Հանրապետության կատարել համապատասխան լրացումներ՝ անազատության մեջ գտնվող անձանց տրամադրվող իրավունքների առավել արդյունավետ իրացման նպատակով:

3. Ակնկալվող արդյունքը

Նախագծի ընդունման արդյունքում կպահպանվեն միջազգային բազմաթիվ փաստաթղթերի պահանջները, ինչպես նաև հնարավոր կլինի ստեղծել լրացուցիչ պայմաններ ապահովելու անազատության մեջ գտնվող անձանց ընտանիքի և արտաքին աշխարհի հետ կապը:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 3-Ի ԹԻՎ 1543-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն չկա:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 3-Ի ԹԻՎ 1543-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների ավելացում կամ նվազեցում չի առաջանում: